ՍՄԿԿ XXVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՌԵԳԻՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՖԵԼԻՔՍ ՂՈՒՆՉՅԱՆ

Գիտատեխնիկական առաջընթացի արագացման, հանրային արտադրության համակողմանի ինտենսիվացման և արդյունավետության աճի պայմաններում աշխատանքային ռեսուրսների որակի բարձրացումն առանձնահատուկ նշանակություն է ստանում։ Ինչպես նշվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումում, «համեմատաբար արագ հատույց կարելի է ստանալ, եթե գործողության մեջ դրվեն... սոցիալական ռեզերվները և, առաջին հերթին, ակտիվացվի մարդկային գործոնը»[1]։ ՍՄԿԿ XXVII համագումարում Մ. Ս. Գորբաչովն ընդգծեց, որ «գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում աշխատանքի հետագա վերափոխումները բարձր պահանջներ են ներկայացնում մարդկանց կրթական և պրոֆեսիոնալ պատրաստությանը... անհրաժեշտ է... վճռականորեն ձգտել ուսուցման արդյունավետության բարձրացմանը»[2]։

Եթե նախկինում տնտեսության զարգացման էքստենսիվ ձևի գերակշռությունը պայմանավորում էր նաև որակյալ կադրերի պատրաստման էքստենսիվ ձևերի առկայությունը, ապա ներկայումս հանրային արտադրության ինտենսիվ զարգացումը թելադրում է որակյալ կադրերի պատրաստման ինտենսիվ ձևերի անհրաժեշտությունը։ Տնտեսության ինտենսիվ զարգացումը պլանավորող մարմինների առջև դնում է նոր խնդիրներ, որոնցից գլխավորներն են. որակապես նոր տիպի մասնագետների պատրաստումը՝ հանրակրթական ու պրոֆեսիոնալ լայն զինվածությամբ, բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մասնագետների պատրաստման միջև օպտիմալ համամասնության ապահովումը, մասնագետների պատրաստման կառուցվածքի և պլանավորվող բանվորական տեղերի միջև առավելագույն համապատասխանության ապահովումը, ուսուցման պրոցեսի ինտենսիվացումը։

Ժողովրդական տնտեսության, նրա առանձին ճյուղերի և ոլորտների պլանավորման ասպարեզում դեռևս լիովին չեն կիրառվում ինչպես կրթության համակարգի, այնպես էլ աշխատավորների որակական մակարդակի զարգացումը բնութագրող տնտեսական ամփոփ ցուցանիշները։ Մինչդեռ դրանք թույլ կտային սոցիալ-տնտեսական ցուցանիշների միասնական համակարգում գնահատել կրթության համար նախատեսված ծախսումների արդյունավետությունը, համադրել կրթության և մասնագիտության այս կամ այն ձևի համար անհրաժեշտ կոնկրետ ներդրումների մեծությունները և, վերջապես, տալ տարբեր մակարդակներում առկա աշխատանքային ռեսուրսների տեղաշարժի տնտեսական գնահատականը։ Պլանավորման համար կարևորագույն նշանակություն ունի ինչպես ողջ աշխատուժի, այնպես էլ արտադրության մեջ զբաղված մասնագետների առանձին խմբերի պոտենցիալ արտադրողականության գնահատումը։ Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս զբաղվածների աշխատանքի պոտենցիալ արտադրողականության և արտադրության տեխնիկատնտեսական ցուցանիշների համեմատական վերլուծությունը կատարել միանգամայն տարբեր մակարդակներում, այն համեմատել տնտեսության զարգացման արդյունավե-

---

1 «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի 1985 թ. ապրիլի 23-ի պլենումի նյութերը», Երևան, 1985, էջ 10։

2 «Սովետական Հայաստան», 26. II. 1986։

տության ցուցանիշների հետ, կանխատեսել աշխատանքային ռեսուրսների և հասարակության մտավոր պոտենցիալի համալիր զարգացման հեռանկարները։ Պլանավորման պրակտիկայում ընդունված է բնակչության կրթական մակարդակի զարգացումը որոշել մասնագետների հագեցվածությունով, այս կամ այն մասնագետների տեսակարար կշիռներով, կրթության տարբեր տեսակների զարգացման համար կատարված կապիտալ ներդրումների հարաբերակցությունով։ Սակայն վերոհիշյալ մեթոդներով կատարված հաշվարկները լիովին չեն բացահայտում աշխատուժի կրթական պոտենցիալի (ԿՊ) տնտեսական գնահատականն ու մակարդակը, նրա ծավալն ու դինամիկան։

Սովետական տնտեսագիտության մեջ փորձեր արվել են ԿՊ-ի հիման վրա տալու հասարակության կուտակած կրթական մակարդակի տնտեսական գնահատականը և որոշելու նրա տեղը սոցիալ-տնտեսական այլ պրոցեսներում[3]։ Սակայն կատարված քայլերը դեռևս բավարար չեն։

Հայտնի է, որ հասարակության սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգընթաց գիտատեխնիկական առաջընթացի ազդեցության տակ տեղի է ունենում աշխատանքի բնույթի և բովանդակության մշտական փոփոխություն, աշխատանքի բարդության և անհամասեռության ուժեղացում, որն արտահայտվում է որակյալ, մտավոր աշխատանքի տեսակարար կշռի աճով, այսինքն՝ աշխատանքի ինտելեկտուալ ատիճանի բարձրացումով։ Դրան համապատասխան փոխվում է նաև հանրային արտադրության մեջ զբաղված աշխատուժի կառուցվածքը։ Կրթությունը՝ որոշակի գիտելիքների, կուլտուրայի, ստեղծագործական աշխատանքի, փորձի փոխանցման միջոցով, բարձրացնում է աշխատանքի հոգևոր ու սոցիալական կարողություններն աշխատանքի պրոցեսում, հանդիսանում է բանվորների որակավորման բարձրացման կարևորագույն նախապայմանը և միաժամանակ օբյեկտիվ պայմաններ է ստեղծում նրանց աշխատանքի որակի, պոտենցիալ արտադրողականության բարձրացման համար։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բանվորների արտադրական պլանի կատարումը, կախված նրանց աշխատանքի ստաժից, տատանվում է 100—150 %-ի սահմաններում (մինչև մեկ տարի աշխատանքային ստաժ ունեցող բանվորների արտադրական պլանը ընդունված է համարել 100 %)։ Մինչև 5 տարի աշխատանքային ստաժ ունեցողների մոտ այն հասնում է 109—120, 6—10 տարվա՝ 131, 10—15 տարվա՝ 135—137, 15—20 տարվա՝ 142—155 %-ի։ Մինչև 7-րդ դասարանի կրթություն ունեցող բանվորների մոտ արտադրական պլանների կատարումը տատանվում է 100—102 %-ի սահմաններում, 10-րդ դասարանի կրթությամբ բանվորների մոտ՝ 121—125 %-ի սահմաններում, պրոֆտեխուսումնարաններն ավարտած երիտասարդների մոտ՝ 129—142 %-ի սահմաններում[4]։

Կրթության վրա կատարված ծախսերն ի հայտ են գալիս աշխատանքային գործունեության ողջ ընթացքում և բարձրորակ աշխատողների աշխատանքի բարձր արտադրողականության շնորհիվ փոխհատուցվում են բազմիցս։ Հաշվարկները ցույց են տալիս, որ բուհ ավարտած աշխատողների արդյունավետությունը նրանց կրթության համար կատարված ծախսերին գերազանցում է 11 անգամ[5]։ Սակայն կրթության համար կատարված ներդրումները և դրանց փոխհատուցումը ժամանակի մեջ չեն համընկնում։ Այդ ներդրումների արդյունավետությունն աշխատուժի արտադրողականության վրա ազդում է մի քա-

---

[3] А. И. Анчишкин, Прогнозирование роста социалистической экономики, М., 1973, с. 180—192; Л. Н. Евдокимова, И. В. Кириченко, Экономическая роль образовательной подготовки трудовых ресурсов, М., 1983; Р. Раяцкас, О. Бальснс, Анализ экономического роста и оценка долгосрочных прогнозов, Вильнюс, 1979.

[4] «Интенсификация производства и производительность общественного труда», Свердловск, 1983, с. 96.

[5] В. Жамив, С. Костанян, Экономика и образование, М., 1970, с. 22.

նի տարի, երբեմն էլ տասնամյակներ հետո՝ կախված կրթության տեսակից և աշխատանքի բնագավառից։ Մեր կարծիքով անհատի պոտենցիալով և նրա հոգևոր ու ֆիզիկական կարողություններով պայմանավորված ձեռք բերած գիտելիքները, հմտությունները և փորձը վերափոխվում են նոր որակի։ Այդ նոր որակն օժտված է աշխատանքի բարդության որոշակի մակարդակով և արմատապես տարբերվում է պարզ աշխատանքի որակից։ Հետևաբար, աշխատողի պատրաստման համար կատարված ծախսերը չեն փոխանցվում նրա ստեղծած աշխատանքի արդյունքներին, այլ բարձրացնում են աշխատանքի որակը՝ ավելի բարորակ աշխատանքի կիրառման պատճառով։

Այսպիսով, հասարակական աշխատանքի ծախսումներն առաջին հերթին նյութականացվում են ստացած և կուտակած գիտելիքների մեջ։ Դրանով իսկ միագումար աշխատուժի մոտ ձևավորվում են ցածր որակավորում ունեցող աշխատուժի համեմատությամբ առավել արտադրողական աշխատանք կատարելու բարձրարտադրողական ունակություններ։

ԿՊ-ը կարելի է որոշել ինչպես ֆիզիկական (կրթության բոլոր տեսակների՝ մարդ-տարի քանակով), այնպես էլ արժեքային արտահայտությունով (զբաղված աշխատուժի պատրաստման համար կատարված ծախսերի գումարը՝ սկսած տարրական կրթությունից մինչև բարձրագույնը)։ Առավել կարևոր է ԿՊ-ի որոշումն արժեքային արտահայտությամբ, քանի որ այն հնարավորություն է տալիս բացահայտել կուտակած ԿՊ-ին նախորդած ներդրումների, կրթության մեկ մարդ-տարվա վրա կատարած հասարակական ծախսումների մեծությունը, ինչպես նաև այդ ծախսումների դինամիկան։ Դրանք իրենց հերթին թույլ են տալիս ուղղակիորեն գնահատել աշխատուժի որակը։

ԿՊ-ի արժեքային գնահատումը կրթության ֆոնդն է։ Այն կուտակված արտադրական պոտենցիալի, հասարակության ինտելեկտուալ արժեքի յուրօրինակ ցուցանիշն է։ Կրթության ֆոնդը կախված է կրթության տեսակներից և աստիճաններից, դրա կառուցվածքից, կրթության բոլոր տեսակներում և աստիճաններում մեկ սովորողի պատրաստման համար կատարվող ծախսումների մեծությունից։ ՀՍՍՀ առանձին ռեգիոններում զբաղվածների կրթական մակարդակի հիման վրա ԿՊ-ի հաշվարկը կարելի է իրականացնել հետևյալ երկու մոդելների օգնությամբ։

1. Կրթական մակարդակի հաշվարկման մոդել

$$Q_j^{(t)} = \sum_{i=1}^{37} mij^{(t)} Ti \qquad \begin{array}{l} j=1, 2, \ldots 37 \\ i=1, 2, \ldots 6 \end{array}$$

որտեղ՝ j — ռեգիոնի ինդեքսն է, i — կրթական աստիճանի ինդեքսն է, i=1 — բարձրագույն կրթությունն է, i=2— թերի բարձրագույն կրթությունն է, i=3—միջնակարգ մասնագիտական կրթությունն է, i — 4—միջնակարգ կըրթությունն է, i=5—թերի միջնակարգ կրթությունն է, i=6—տարրական կրթությունն է, $Q_j^{(t)}$ — ռեգիոնի կրթական պոտենցիալն է մեկ տարում, $mij^{(t)}$ — ռեգիոնի կրթական աստիճան ունեցող զբաղվածների թվաքանակն է տարում, T—համապատասխան կրթական աստիճանի համար անհրաժեշտ ուսման տևողությունն է։ $T_1=15$, $T_2=13$, $T_3=12$, $T_4=10$, $T_5=8$, $T_6=4$. $t(Q^t)$ — ^{t} — տարվա համար հանրապետության կրթական մակարդակը բնութագրող մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q^{(t)} = \sum_{j=1}^{37} Qj^{(t)}$$

2. Կրթական պոտենցիալի արժեքային գնահատման, այսինքն՝ կրթական ֆոնդի, հաշվարկման մոդել

$C_j^{(t)} = \sum_i m_{ij}^{(t)} V_i^{(t)} T_i$, որտեղ՝ $C_j^{(t)}$ — j ռեգիոնի կրթական ֆոնդն է, $V_i^{(t)}$ — կրթական i առտիճանի արժեքային գնահատականը, որը արտահայտում է մեկ սովորողին ընկնող կրթության տվյալ ձևի մեկ տարվա ծախսերը[6].

$$V_1 = 1000 \text{ ռ.} \qquad V_2\ 650 \text{ ռ.}$$
$$V_3 = V_4 = V_5 = V_6 = 180 \text{ ռ.}$$

Հայկական ՍՍՀ մասշտաբով կրթական ֆոնդի մեծությունը t տարվա համար որոշվում է հետևյալ բանաձևով.

$$C^{(t)} = \sum_{j=1}^{17} C_j^{(t)}$$

Թույլատրելի պայմաններն են. ա) տարրական կրթություն ունեցող աշխատողների թվի մեջ են մտնում նաև 5—7 դասարաններն ավարտածները, բ) հաշվի չեն առնվում այն անձինք, ովքեր ունեն տարրականից ցածր կրթություն (1-ին, 2-րդ, 3-րդ դասարաններ) և այն անձինք, ովքեր անցել են որակավորման բարձրացման և վերաորակավորման կուրսեր, գ) կրթության ֆոնդի հաշվարկների համար օգտագործվել են բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և հանրակրթական դպրոցի մեկ սովորողի ուսուցման համար ծախսված միջոցները որոշակի տարվա ընթացքում, որ հնարավորություն է տալիս բացառելու ծախսերի փոփոխությունը ժամանակի ընթացքում։

Կրթական մակարդակի հաշվարկի վերոհիշյալ մեթոդի օգնությամբ հնարավոր է տալ ժողովրդական տնտեսության տարբեր մակարդակներում և ոլորտներում զբաղված աշխատուժի ԿՊ-ի տնտեսական գնահատականը, բացահայտել ԿՊ-ի դինամիկան ու կառուցվածքը, վեր հանել վերջինիս փոփոխությունների հիմնական միտումները։ Աշխատանքային ռեսուրսների որակը կառավարելիս նշված գործոնների դերն ու նշանակությունը դժվար է գերագնահատել։ ԿՊ-ի կառուցվածքի վերլուծությունից բխում է հետևյալ հարցադրումը. զբաղված միագումար աշխատուժի ներսում տեղի ունեցող որակական տեղաշարժերն արտացոլող կրթական ի՞նչ մակարդակների շնորհիվ է տեղի ունենում ԿՊ-ի աճը։

ԿՊ-ն պայմանավորված է կոնկրետ ժամանակի և տարածության յուրաքանչյուր փուլում անհավասարաչափ գործող սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործոններով։ Ժողովրդագրական գործոնները հիմնականում արտացոլում են ԿՊ-ի աճի քանակական կողմը, իսկ սոցիալ-տնտեսական գործոնները՝ դրա որակական հատկանիշները։ Հետևաբար, ԿՊ-ի բնական ցուցանիշը դրա քանակական ցուցանիշն է, իսկ արժեքայինը՝ կրթական ֆոնդի որակական ցուցանիշը։ Վերջինս, թեև հիմնվում է աճի քանակական կողմի վրա, ավելի քիչ է պայմանավորված նրանով, քան որակական հատկանիշներով, սովորողին անհրաժեշտ գիտելիքների ծավալով օժտելու համար ծախսված նյութական միջոցներով։ Դիտարկենք ՀՍՍՀ բնակչության ԿՊ-ի դինամիկան 1959—1979 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում։

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս ԿՊ-ի աճի բարձր տեմպերը հատկապես քաղաքային բնակչության մոտ։ Քաղաքներում արդյունաբերական արտադրության համակենտրոնացման պատճառով քաղաքային և գյուղական բնակչի կրթական միջին մակարդակի տարբերությունն ավելի է մեծանում։ Այդ հակադրությունն առավել զգալի դարձավ 1959—1979 թթ., երբ

---

6 Վերցրել ենք մեկ սովորողին ընկնող միջին ծախսերը։

Աղյուսակ

ՀՍՍՀ բնակչության կրթական պոտենցիալի դինամիկան 1959—1979 թթ.[7]

	Բնակչության կրթական պոտենցիալը 10 տարուց և բարձր (մարդ-տարի)			Կրթության տարիները բնակչության 1 մարդու հաշվով			Աճի տեմպերը (%-ով)		
	1959 թ.	1970 թ.	1979 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.	1959—1970 թթ.	1970—1979 թթ.	1959—1979 թթ.
քաղաքային բնակչություն	4092512	8328455	14214842	6,3	7,3	9,0	204	171	347
տղամարդ	1993423	4137328	6906171	6,5	7,5	9,1	206	167	346
կին	2099089	4191127	7308671	6,0	7,1	8,8	200	174	348
գյուղական բնակչություն	2528297	3349196	5721350	4,2	4,8	6,9	132	171	226
տղամարդ	1328474	1739808	2961133	4,8	5,2	7,3	131	170	228
կին	1199823	1609388	2760217	3,7	4,4	6,4	134	172	230

7 Կազմված է հանրապետության տարեգրքերի տվյալներով 1959, 1970 և 1979 թթ. տարվա դրությամբ։

մեծացավ հանրապետության գյուղական բնակչության շարժը, որը հիմնականում ընդգրկում էր երիտասարդությանը և բանվորական որակյալ աշխատուժը։ Հատկանշական է, որ մեր հանրապետությունում կանանց կրթական մակարդակը փաստորեն հավասարվում է տղամարդկանց կրթական մակարդակին։ Գյուղական և քաղաքային բնակչության ԿՊ-ի մակարդակների միջև եղած մեծ տարբերությունն առաջին հերթին պայմանավորված է բարձրագույն կրթությամբ մասնագետների քանակով։ Եթե 20 տարվա ընթացքում կրթության այդ տեսակի տեսակարար կշիռը քաղաքային բնակչության մոտ աճել է 4,9 կետով, ապա գյուղական բնակչության մոտ՝ ընդամենը 1 կետով։ Իսկ գյուղի և քաղաքի միջին մասնագիտական կրթությամբ բնակչության հարաբերակցությունը մնում է անփոփոխ։ ԿՊ-ի ձևավորման կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ բարձրորակ մասնագիտական կադրերի առկայության տեսակետից գյուղական բնակչությունը զգալիորեն ետ է մնում քաղաքայինից։ Գյուղական բնակչության ետ մնալը նկատելի է նաև ընդհանուր միջնակարգ կրթության ասպարեզում և դա այն դեպքում, երբ գյուղական բնակչության աշխատունակ մասի բաժինը զգալիորեն գերազանցում է քաղաքայինին։

Փաստացի տվյալները վկայում են ՀՍՍՀ առանձին ռեգիոններում բնակչության ԿՊ-ի զգալի տարբերակումը։ Դա նախ և առաջ բնակչության ընդհանուր թվաքանակի և նրա սեռատարիքային կազմի տարբերությունների արդյունք է։ Սակայն ռեգիոնալ աշխատանքային ռեսուրսների ԿՊ-ի մակարդակի անհամամասնության հիմնական պատճառը քաղաքային և գյուղական բնակչության ԿՊ-ի միջև առկա անհամամասնությունն է։ Հարկ է նշել, որ եթե, ընդհանուր առմամբ, գյուղական բնակչության ԿՊ-ի մակարդակը փոքր-ինչ զիջում է հանրապետականի կեսին, ապա տնտեսական այնպիսի շրջաններում, ինչպիսիք են Շիրակը և Լոռին, այն համապատասխանաբար կազմում է 30 և 32,7 %[8]։ Միաժամանակ տնտեսական այն շրջաններում, ուր չկան խոշոր քաղաքներ, ԿՊ-ն ողջ շրջանում գտնվում է մոտավորապես նույն մակարդակի վրա, իսկ գյուղատնտեսական զարգացած շրջաններում՝ միջին հանրապետականից բարձր է (օրինակ՝ Արարատյան տնտեսական շրջանում կազմում է 66,7, իսկ Աղստևի տնտեսական շրջանում՝ 69,7 %)։ Միաժամանակ գյուղական բնակչությանը հատուկ է տարրական և թերի միջնակարգ կրթությամբ մարդկանց տեսակարար մեծ կշիռը, որը կազմում է միջին հանրապետականի 75 %-ը։

Ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ նրա առանձին ռեգիոնների բնակչության կրթական մակարդակի բարձրությունը որոշվում է մեկ մարդուն ընկնող կրթության տարիների միջին թվով։ Վերջինս իր հերթին աշխատանքի միջին բարդության կամ աշխատողի որակավորման միջին աստիճանի բնութագիրն է։ Քաղաքային և գյուղական բնակչության կրթության միջին մակարդակների միջև եղած տարբերությունը (ուսուցման 2, 1 տարի) մեկ անգամ ևս արձանագրում է քաղաքի և գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև պահպանվող տարբերությունը։ Դրանց տարբերությունը հատկապես մեծ է Լոռու տնտեսական շրջանում, ուր այն կազմում է 2, 3 տարի։

Արդյոք լիարժե՞ք է օգտագործվում ռեգիոններում կուտակված ԿՊ-ն, առկա չե՞ն արդյոք հանրային արտադրության մեջ չօգտագործվող ԿՊ-ի ռեզերվներ։ Հանրային արտադրությանն անհրաժեշտ բարձրորակ աշխատողների ռեալ պահանջը բացահայտելու նպատակով համանման հաշվարկներ ենք կատարել վարչական բոլոր շրջանների զբաղված բնակչության կտրվածքով։ Ինչպես և պետք էր սպասել, շրջաններում ԿՊ-ի օգտագործման աստիճանը բարձր չէ։ Զբաղված բնակչության կրթական մակարդակի և ամբողջ բնակչության կրթական մակարդակի հարաբերակցությունը ըստ ռեգիոնների կազմել է՝ Արարատ-

---

8 Այս և հետագա հաշվարկները կատարված են մեր կողմից՝ 1970, 1979 թթ. մարդահամարների տվյալների հիման վրա։

յան տնտեսական շրջանում՝ 66,9, Շիրակի տնտեսական շրջանում՝ 72, Սևանի տնտեսական շրջանում՝ 70,4, Լոռու տնտեսական շրջանում՝ 69,5, Աղըստևի տնտեսական շրջանում՝ 71,2, Սյունիքի տնտեսական շրջանում՝ 70։ Տնտեսական վեց շրջաններում էլ գործնականում առկա են ԿՊ-ի մեծ ռեզերվներ, որոնք կրթության երեք տեսակները հաշվի առնելու դեպքում միասին կազմում են 994347 մարդ-տարի։ Դրանից 233218 մարդ-տարին կամ 28 %-ը բաժին է ընկնում բարձրագույն, թերի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետներին։ Համեմատության կարգով ասենք, որ դա ավելի բարձր է, քան Սյունիքի տնտեսական շրջանի ողջ ԿՊ-ն և 2 անգամ ավելի է, քան Աղստևի տնտեսական շրջանի ողջ ԿՊ-ն։

Անհավասար են նաև ԿՊ-ի աճի տեմպերն ըստ ռեգիոնների։ ԿՊ-ի աճի ամենացածր տեմպերն առկա են Լոռու տնտեսական շրջանում (143), ուր մյուս շրջանների հետ համեմատած բարձր է կրթության միջին մակարդակը, այսինքն՝ այն հագեցած է կադրերով ու մասնագետներով, որոնց ոչ լիարժեք օգտագործումն օբյեկտիվորեն խոչընդոտում է տվյալ ռեգիոնում զբաղվածների ԿՊ-ի աճին։ Շիրակի տնտեսական շրջանում ԿՊ-ի աճի տեմպերը ցածր են միջին հանրապետականից, որը ռեգիոնի ԿՊ-ի ոչ ռացիոնալ օգտագործման հետևանք է։ Զբաղված բնակչության աճի տեմպերի համեմատությամբ ԿՊ-ի աճի ավելի բարձր տեմպերը վկայում են աշխատուժի սոցիալական և աշխատանքային մեծ շարժունակության մասին։ Եթե Հայկական ՍՍՀ-ում, քննվող ժամանակաշրջանում, ԿՊ-ի աճը կազմել է 170 %, ապա Շիրակի տնտեսական շրջանում՝ 165, Սևանի՝ 189, Աղստևի՝ 167, Սյունիքի՝ 208,8 %։ Տնտեսական շրջանի մասշտաբով ԿՊ-ի և զբաղվածների թվի աճի տեմպերի համեմատությունը վկայում է, որ ԿՊ-ի աճը փաստորեն քիչ է կախված զբաղվածների կամ աշխատատեղերի թվի աճից։

ՀՍՍՀ-ում աշխատանքային ռեսուրսների ռեգիոնալ զարգացման առանձնահատկություններից մեկը զբաղված բնակչության աճի տեմպերի նկատմամբ ԿՊ-ի աճի տեմպերի առաջանցիկ բնույթն է։ Զբաղված բնակչության ԿՊ-ի կառուցվածքի վերլուծությունը մարդահամարների միջև ընկած 9 տարվա ժամանակահատվածում ցույց է տալիս, որ ԿՊ-ում եղած կառուցվածքային տեղաշարժերը չեն հանգեցրել ըստ առանձին ռեգիոնների դրանց հավասարեցմանը, չնայած տնտեսական բոլոր շրջաններում էլ ԿՊ-ն ուսուցման բոլոր տեսակների գծով բացարձակորեն աճել է։ Այսպես, օրինակ, եթե բարձրագույն կրթությամբ մասնագետների թիվը Լոռու տնտեսական շրջանում նվազել է 2 կետով, իսկ Աղստևի տնտեսական շրջանում պահպանվել է 1970 թ. մակարդակը, ապա Արարատյան, Շիրակի և Սյունիքի տնտեսական շրջաններում այն համապատասխանաբար աճել է 4, 5; 3, 3 և 3, 0 կետով։ Բացարձակ մեծությամբ Արարատյան տնտեսական շրջանում զբաղված են հանրապետության բարձրագույն, թերի բարձրագույն կրթությամբ մասնագետների կեսից ավելին։ Դա վկայում է կրթության մակարդակի ռեգիոնալ աճող անհամամասնության մասին։ Տարածքային առումով աշխատանքային ռեսուրսների որակական աճի հաջորդ առանձնահատկությունը ԿՊ-ի զգալի աճն է միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների կտրվածքով և, ընդհակառակը, ցածր որակավորում ունեցող զբաղվածների կրճատման բարձր տեմպերն են։

Անցնենք վերջին երկու մարդահամարի ընթացքում կուտակված և օգտագործված ռեգիոնալ ԿՊ-ի տնտեսական գնահատմանը։ Այդ նպատակով վերլուծենք բնակչության, այդ թվում զբաղվածների կրթական ֆոնդի կառուցվածքը։ Հաշվարկները ցույց են տալիս, որ հանրապետությունում կուտակված, բայց մարդահամարի պահին դեռևս չօգտագործված ԿՊ-ի արժեքային մեծությունը 1979 թ. կազմել է շուրջ 495 մլն ռ.։ Սոցիալ-տնտեսական առումով առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում կրթության երեք տեսակներով՝ բարձրագույն, միջնակարգ մասնագիտական, ընդհանուր միջնակարգ, չիրացված կրթական ֆոնդը, որը կազմել է 173,4 մլն ռ., որից բարձրագույն կրթությանը բաժին է ընկել 16,5, միջնակարգ մասնագիտականին՝ 9,5, իսկ հանրա-

կրթականին՝ 74 %-ը։ Բնականաբար, հասարակության համար միևնույնը չէ, թե հատկապես կրթության որ տեսակների գծով են առկա առավելագույն կորուստները, քանզի բարձրագույն և միջնակարգ կրթության մեջ ներդրված 1 ռուբլու հատույցը տարբեր է։ Անհրաժեշտ է ընդգծել, որ միջնակարգ կրթության վրա կատարված ծախսերի ոչ մեծ արդյունավետությունը պայմանավորված է միջնակարգ դպրոցների շրջանավարտների պրոֆեսիոնալ պատրաստվածության ցածր մակարդակով, նրանց մոտ արաստդրական հմտության բացակայությունով։ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ընդունած հանրակրթական և պրոֆեսիոնալ դպրոցի ռեֆորմի որոշումներով նախատեսվում է ակտիվացնել երիտասարդության պրոֆկողմնորոշման բնագավառում տարվող աշխատանքները։ Այդ խնդրի կատարման գործում կարևոր նշանակություն կունենան նաև պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության համակարգի զարգացումը, միջնակարգ դպրոցի ճյուղային մասնագիտացման խորացումը։ Վերջինս հատկապես հրատապ նշանակություն ունի հանրապետության գյուղական շրջանների համար։ Գյուղի երիտասարդության պրոֆեսիոնալ կողմնորոշումը զգալիորեն կթուլացնի բնակչության արտահոսքը, կնպաստի տեղում կադրերի ամրապնդմանը, նրանց ռացիոնալ զբաղվածությանը։ Անհրաժեշտ է նշել, որ քաղաքային բնակչության մեծ տեսակարար կշիռ ունեցող ռեգիոններում գյուղական բնակչության կրթական ֆոնդը զգալիորեն ցածր է հանրապետության միջինից։ Դրանք, մասնավորապես Շիրակի և Լոռու տնտեսական շրջաններն են (Լենինական և Կիրովական քաղաքներով)։ Կրթական ֆոնդի ուժեղ արտահայտված նման անհամամասնությունը ռեգիոնի ներսում չի կարելի դրական համարել, քանի որ դա խորացնում է քաղաքի ու գյուղի միջև եղած սոցիալական և տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունները, ուժեղացնում է միգրացիոն պրոցեսները։ Մասնավորապես, Արարատյան տնտեսական շրջանում միայն բարձրագույն կրթության հաշվին կուտակած կրթական ֆոնդը կազմում է 48,3 մլն ռ., որը 8 մլն ռուբլով ավելի է, քան Շիրակի, Լոռու և Սյունիքի տնտեսական շրջանները միասին վերցրած։ Մեր հաշվարկներով հանրապետության (առանց Երևան քաղաքի) ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների կրթական ֆոնդը 1979 թ. կազմել է 1617,2 մլն ռ., որից 669,5 մլն ռուբլին (կամ 41,4 %-ը) բաժին է ընկել գյուղական բնակչությանը։ Սակայն, եթե գյուղական բնակավայրերում զբաղված միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ունեցողներին բաժին է ընկել 496,5 մլն ռ., ապա քաղաքային բնակավայրերում զբաղվածներին՝ 1070 մլն ռ.։ Այլ կերպ ասած, հանրապետությունում իրոք առկա են աշխատանքային պոտենցիալի ոչ ռացիոնալ օգտագործման տնտեսական և սոցիալական մեծ ռեզերվներ։

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКАЯ ОЦЕНКА КАЧЕСТВА ТРУДОВЫХ РЕСУРСОВ РЕГИОНА

ФЕЛИКС ГУЩЯН

Резюме

Образование как важнейший фактор, генерирующий производительную способность рабочей силы, является активной сферой ускорения научно-технического прогресса.

Сохранившаяся разница в уровнях социально-экономического развития между регионами, городом и селом отчетливо проявляется в оценке образовательного потенциала, накопленного в населении и трудовых ресурсах. Образовательный потенциал, рассчитанный в натуральном и стоимостном выражении, позволяет установить пределы качественного роста региональных трудовых ресурсов, эффективность затрат на образование и наличие региональных резервов вовлечения образовательного потенциала в народное хозяйство.